5 մարտի 2009 թվականի N 225 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N 598-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի «Սննդամթերքի և սննդային հավելումների փորձաքննության նմուշառման կարգը հաստատելու մասին» N 598-Ն որոշման կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում և ամբողջ տեքստում «սննդամթերքի և սննդային հավելումների», «սննդամթերքի կամ սննդային հավելումների» բառերը և դրանց հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել «սննդամթերքի, անասնակերի, սննդային և կերային հավելումների», «սննդամթերքի, անասնակերի, սննդային կամ կերային հավելումների» բառերով և դրանց հոլովաձևերով.

2) նախաբանում «կետի» բառը փոխարինել «և «Անասնակերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետերի» բառերով.

3) որոշման հավելվածում՝

ա. երրորդ բաժնի վերնագիրը «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ» բառից հետո լրացնել «, ԱՆԱՍՆԱԿԵՐԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ» բառերով,

բ. 34-րդ կետը «մարդու» բառից հետո լրացնել «կամ կենդանու» բառերով,

գ. 37-րդ կետի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ցանկի 32-րդ տողում «ժմեխ» բառը փոխարինել «քուսպ» բառով, իսկ «շրոտ» բառը՝ «աղացած քուսպ» բառերով,

դ. 37-րդ կետի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ցանկը 43-րդ տողից հետո լրացնել հետևյալ նոր տողերով՝

«

44.	ԳOUS 13496.0	Համակցված կերեր, հումք. Նմուշառման մեթոդներ	համակցված կերեր, պրեմիքսներ, սպիտակուցա-վիտամինային և ամիդովիտամինային հավելում-ներ, կարբամիդային խտանյութ և հումք՝ դրանց արտադրության համար՝ կարբամիդ, կենդանա-կան ծագման ալյուր, ձկնային և ծովային կաթնա-սուններից և խեցգետնակերպերից ստացվող ալյուր, կերային դրոժներ, շաքարի արտադրու-թյան մնացուկներ, խոտալյուր, վիտամինային կանաչ ալյուր, կերային ալյուր, խաղողի մզուկից ստացված կերային ալյուր, չոր եգիպտացորենային կերեր
45.	ԳOUS 27262	Բուսական ծագման կերեր. Նմուշառման մեթոդներ	կանաչ կերեր, խոտ, ծղոտ, սիլոս, սենաժ, արհեստական չորացրած կերեր՝ խոտից
46.	ԳOUS 20083	Կերային դրոժներ. Տեխնիկական պայմաններ	կերային դրոժներ
47.	ԳOUS 20438	Ջրիմուռներ, ծովային խոտեր և դրանց վերամշա-կումից ստացված արտադրանք. Ընդունման կանոններ. Որակի գնահատ-ման զգայորոշ-ման մեթոդ. Լաբորատոր փորձաքննու-թյան համար նմուշառման մեթոդներ	ջրիմուռներ, ծովային խոտեր և դրանց վերամշակումից ստացված արտադրանք
48.	ԳOUS 28736	Կերային արմատա-պտուղներ. Տեխնիկական պայմաններ	կերային, շաքարային և կիսաշաքարային ճակնդեղ, գոնգեղ, գազար և շաղգամ
49.	ԳOUS 17536	Կենդանական ծագման ալյուր. Տեխնիկական պայմաններ	կենդանական ծագման ալյուրներ՝ նախատեսված համակցված կերերի արտադրության և թռչունների ու անասունների կերակրման համար

50.	GOUS 28189	Ոսկրային կիսաֆաբրիկատ. Տեխնիկական պայմաններ	ոսկրալյուրի կիսաֆաբրիկատ՝ նախատեսված չոր կենդանական կերերի ու համակցված կերերի արտադրության և թռչունների ու անասունների կերակրման համար

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. մարտի 10
Երևան